ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ի լրումն 2022 թվականի հոկտեմբերի 27-ին կնքված № 22/10/06 պայմանագրի

ք. Երևան

03-ը նոյեմբերի 2022թ.

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս գործադիր տնօրեն Հովհաննես Մովսիսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և

«Բեգրաունդ փրոդաքշն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Վազգեն Պողոսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից,

(այսուհետ յուրաքանչյուրն առանձին՝ Կողմ, միասին՝ Կողմեր),

հիմք ընդունելով Կողմերի միջև 2022 թվականի հոկտեմբերի 27-ին կնքված թիվ 22/10/06 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.12. կետը՝ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Կողմերը սույնով արձանագրում են, որ Պայմանագրով նախատեսված՝ Կատարողի կողմից Ծառայությունների մատուցման համար և այդ նպատակով Պատվիրատուի մոտ նախատեսվել են և առկա են համապատասխան ֆինանսական միջոցներ:
2. Հիմք ընդունելով սույն Համաձայնագրի 1-ին կետը՝ Պայմանագրով նախատեսված Ծառայությունները ենթակա են մատուցման Կատարողի կողմից՝ Պայմանագրով և սույն Համաձայնագրով նախատեսված կարգով և պայմաններով:
3. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:
4. Սույն Համաձայնագիրը ստորագրված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկական օրինակ:

Պատվիրատու
«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Գ. Հովսեփյան 26
ՀՎՀՀ՝ 01540062
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2050022082671001

Հ. Մովսիսյան
Գործադիր տնօրեն

Կատարող
«Բեգրաունդ փրոդաքշն» ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Անտառային փ. 160/14 8
ՀՎՀՀ՝ 02676654
«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 16600559951800

Վ. Պողոսյան
Տնօրեն